Ա. Աշոտյանի դիմանկար է ուզում՝ խոստանալով չնեղանալ (տեսանյութ) - «1in.am», 04.05.2011

Այսօր Հայաստանի նկարիչների միությունում տեղի ունեցավ ցուցահանդես՝ նվիրված Գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնադրման 65-ամյակին: Նախատեսվում էր, որ ցուցահանդես կայցելի նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, սակայն, ինչպես իր խոսքում նշեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, զբաղվածության պատճառով վերջինս չի կարողացել գալ: «Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի շրջանավարտներն են մեր բոլոր հայտնի արվեստագետների ավելի քան 90%-ը: Այն, ինչ մենք այսօր ունենք մեր ակադեմիայում, կարելի է ասել, որ նախևառաջ նրանց շնորհիվ է»,- իր բացման խոսքում նշեց Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը: «Հիշեցի մի ասացվածք, որ պատկանում է մեր հայտնի նկարիչներից մեկին, որն ասում էր, թե ամեն մի նոր դիմանկար նկարելիս ինքը մի ընկեր է կորցնում: Ես պետք է հորդորեմ մեր նկարիչներին շարունակել այդպես արարել՝ անկախ նրանից դա դուր կգա, թե դուր չի գա այս կամ այն մարդուն: Ես հուսով եմ, որ մի օր կարժանանամ մեր հայտնի նկարիչների կողմից դիմանկար ունենալու պատվին, խոստանում եմ, որ չեմ նեղանա՝ անկախ նրանից, թե ինչ սյուրռեալիստական կամ ռճաբանական տիպի նկար կլինի»,- ասաց կրթության և գիտության նախարարը:

https://youtu.be/GNAAt1oKLJM

https://www.1in.am/15301.html